Զօր. Ուօկկեր.— «Դուք կարող էք տեղեկութիւններ ու հեռագիրներ ստանալ աշխարհի բոլոր մասերից, բայց ես վճռականօրէն պնդում եմ, որ այդ ճիշդ չէ»:

Ժորտանիա.— «Շատ հաճելի է, որ զօրավարը հերքում է զոյութիւնը այս տխուր փաստի: Բայց ես կը շարունակեմ իմ միտքը: Իմ պատմած բոլոր այս բաներից յետոյ իրաքանչիւր վրացու գլուխը սողոսկում է անվանելի մի ծիծաղ. ինչո՞ւ է այս ամէնը տեղի ունենում Դաշնակիցների մեր երկիրը դալուց յետոյ: Մենք բոլորովին հաւատում ենք Լոնդոնից ստացուած հեռագրի անկեղծութեան, եւ միաժամանակ Վրաստանի կառավարութիւնը իր պարտքն է համարում յայտարարել ձեզ, իբրեւ Դաշնակիցների ներկայացուցչի, որ այն ամէնը, որ կատարւում է այստեղ, բնաւ ձեռնտու չէ Դաշնակից պետութիւններին: Երկրի բովանդակ հանրային կարծիքը, ազգաբնակութեան բոլոր դասերը, ամբողջ մամուլը, ողջը, որ կայ մտածող հանրապետութեան մէջ,— պահանջում են կառավարութիւնից պարզել՝ ի՞նչ է Դաշնակիցների քաղաքականութիւնը եւ ի՞նչ են ուզում նրանք Վրաստանից: Մենք պատասխանում էինք, որ «միակ մարդը, որ կարող է սպառող պատասխան տալ, զօր. Ուօկկերն է, բայց, ի մեծ դժբախտութիւն, նա այժմ բացակայ է. երբ վերադառնայ, ամէն ինչ կը պարզուի եւ, անկասկած, յօգուտ մեր»:

Զօր. Ուօկկեր.— «Ես լիապէս հաւատացած չեմ այդ բանում»:

Գեգեչկորի.— Ես կ'ուզէի բացատրել զօրավարին այն պատճառները, որոնք առաջ բերին Վրաստանի կառավարութեան կողմից անգլիական հրամանատարութեան ուղղուած բողոքը, Կամաւորական բանակի եւ Բաթումի ընդհանուր նահանգապետի գործունէութեան նկատմամբ: Ես զուգընթացաբար կը շօշափեմ եւ նրանց հրատարակութեան պատճառները եւ հէնց հիմակուանից յայտարարում եմ, որ ոչ մի վիրաւորական բան չեմ տեսնում նրանց մէջ: Բանն այն է, որ զօրավարի բացակայութեան միջոցին տեղի ունեցան երեք ցաւալի դէպքեր»:

Զօր. Ուօկկեր.— «Ես չօշափել եմ բացառապէս արտաքին գործոց նախարարութեան յայտնած բողոքը դնդ. Գետեւանովի հետ Բաթումում պատահած միջադէպի առթիւ:

Գեգեչկորի.— «Կրկնում եմ, տեղի են ունեցել երեք տխուր դէպքեր ձեր բացակայութեան ժամանակ, զօրավար: Առաջինը՝ Կամաւորականների յառաջխաղացումը, երկրորդ՝ դնդ. Գեղեւանովի միջադէպը եւ երրորդ՝ անգլիական ոստայի միջամտութիւնը Փոթիում վրաց զինուորական իշխանութիւնների օրինաւոր կարգադրութիւններին: Զօրավարին, անպայման, յայտնի են բոլոր մանրամասնութիւնները. վրաց կառավարութիւնը չէր կարող անտարբեր մնալ դէպի բոլոր կատարուածը. եւ որովհետեւ յուզումը ազգաբնակութեան մէջ աճում էր, մենք ստիպուած եղանք հրատարակել մեր բողոքը եւ հէնց որ ստացանք դնդ. Գեղեւանովի հաղորդագրութիւնը, որ մանրամասն զեկուցանում էր բոլոր կատարուածի մասին եւ որ լիովին զոհացրեց կառավարութեան, մենք անհրաժեշտ համարեցինք տեղեկութիւններ տալ մամուլին եւ ցոյց տալ ժողովրդին, որ Վրաստանի կառավարութեան աշխատանքը ուղղուած է հանրապետութեան ամբողջ բնակչութեան եւ առանձին քաղաքացիների շահերի եւ արժանապատուութեան պաշտպանութեան կողմը»:

Զօր. Ուօկկեր.— «Ես պէտք է յայտնեմ վարչապետին, որ տխուր միջադէպը անգլիական ոստայի հետ Փոթիում, որի մասին յիշեց արտաքին գործոց նախարարը, իրապէս տեղի չի ունեցել: Ես շատ եմ ցաւում, որ վրաց կառավարութեան տեղեկութիւնները ճիշդ չեն: Իրականին մէջ ահա թէ ինչ է տեղի ունեցել. նաւերի վարչութիւնը Փոթի նաւահանգստում չի ուզեցել փոխադրել վրաց զօրքը եւ այդ բանի համար խնդրել է անգլիական զինուորական իշխանութիւնից թոյլատրութիւն, բայց որովհետեւ անգլիացիք ոչ մի յարաբերութիւն կամ միջամտելու իրաւունք չունին վրաց հանրապետութեան ներքին գործերին, անգլիական իշխանութիւնները չէին կարող տալ նման թոյլատրութիւն: Ահա իրական եղելութիւնները մամուլի կողմից խեղաթիւրելու մի դէպք: Ես խնդրում եմ պարոն վարչապետից պատասխանել, այդեօք Վրաստանի կառավարութիւնը իր